Երկրորդ ընթերցում
Կ-620-20.06.2023-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 4-րդ մասում «օրինակելի ուսումնական պլանը» բառերը փոխարինել «ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը և ուսումնական պլանի կազմման կանոնները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում «մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի և» բառերը փոխարինել «գիտամանկավարժական կամ մանկավարժական աշխատանքի կամ» բառերով.

2) 18-րդ մասը մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Պետական ուսումնական հաստատության համակարգող կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 5 տարվա ընթացքում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հանրային պաշտոններում կամ հանրային ծառայության պաշտոններում կամ ղեկավարման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) առնվազն 3 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.3. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանները կազմում է ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի և ուսումնական պլանի կազմման կանոնների հիման վրա, համաձայն որի՝ դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական

հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին:»:

Հոդված 4. Օրենքի 17.1 հոդվածը լրացնել նոր՝ 12-րդ և 13-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«12. Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողները կարող են դիմել և մասնակցել կամավոր ատեստավորմանը:

«13. Կամավոր ատեստավորման գործընթացում մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի» բառերը փոխարինել «մարզերի» բառով:

Հոդված 6 Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում «պահանջներին համապատասխան» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև մինչև տվյալ առարկայի թափուր տեղը մրցութային կարգով համալրվելը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ ենթակետով՝ հետևալ բովանդակությամբ.

«3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության ***առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող*** *ավարտական կուրսի* ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:»:

2) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Տնօրենը ապահովում է ուսուցչի մասնակցությունը մասնագիտական զարգացման կարիքի հիման վրա իրականացվող վերապատրաստմանը:»:

3) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Յուրաքանչյուր ուսուցիչ, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները բավարարող յուրաքանչյուր անձ, կարող է դիմել և մասնակցել կամավոր ատեստավորման.»:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «և տնօրենի նշանակման կարգը» բառերը փոխարինել «,տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը» բառերով:

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 12.5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.5) հաստատում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կարգը և կամավոր ատեստավորման արդյունքով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը.».

Հոդված 10. Օրենքի 30-րդ հոդվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետում «պետական ուսումնական հաստատություններ» բառերից առաջ լրացնել «մարզերի» բառը:

Հոդված 11. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «օգոստոսի 20-ը,» բառից և թվից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովում են ուսուցչին ներկայացվող պահանջները, կամ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և կառավարության սահմանած կարգով համարվել ատեստավորված: ***Կամավորը ատեստավորումը անցած և ատեսավորված անձը կարող է տվյալ կամ այլ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում իրականացնել (շարունակել) մանկավարժական աշխատողի գործունեությունը***: Կամավոր ատեստավորմանը հայտ ներկայացրած և անկախ պատճառներից՝ չմասնակցած ուսուցիչների մասնագիտական գործունեությունը դադարեցվում է ***համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի***

սահմանած 2023 թվականի ժամանակացույցի՝ տվյալ առարկայի կամավոր ատեստավորման օրվան հաջորդող օրվանից:» բառերը:

Հոդված 12. Սույն նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ուժի մեջ են մտնում հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ժամանակացույցի համաձայն:

Հոդված 13. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 ամսվա ընթացքում:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծի վերաբերյալ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 4-րդ մասում «օրինակելի ուսումնական պլանը» բառերը փոխարինել «ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքը և ուսումնական պլանի կազմման կանոնները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի՝

3) 3-րդ մասում «մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի և» բառերը փոխարինել «գիտամանկավարժական կամ մանկավարժական աշխատանքի և ուսումնական ~~հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարման~~ կամ» բառերով.

4) 18-րդ մասը մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Պետական ուսումնական հաստատության համակարգող կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 5 տարվա ընթացքում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հանրային պաշտոններում կամ հանրային ծառայության պաշտոններում կամ ղեկավարման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) առնվազն 3 տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.3. Հանրակրթական պետական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունն իր ուսումնական պլանները կազմում է ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքի և ուսումնական պլանի կազմման կանոնների հիման վրա, համաձայն որի՝ դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակը ուսումնական հաստատությունը բաշխում է պետական բաղադրիչով սահմանված կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած առարկաներին:»:

Հոդված 4. Օրենքի 17.1 հոդվածը լրացնել նոր՝ 12-րդ և 13-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«12. Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողները կարող են դիմել և մասնակցել կամավոր ատեստավորմանը:

«13. Կամավոր ատեստավորման գործընթացում մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է հինգ տարի ժամկետով հավելավճարի սահմանման համար:»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի» բառերը փոխարինել «մարզերի» բառով:

Հոդված 6 Օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում «պահանջներին համապատասխան» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև մինչև տվյալ առարկայի թափուր տեղը մրցութային կարգով համալրվելը» բառերը:

Հոդված 7. Օրենքի 26-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ ենթակետով՝ հետևալ բովանդակությամբ.

«3) ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության ***առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող*** ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:»:

3) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Տնօրենը ապահովում է ուսուցչի մասնակցությունը մասնագիտական զարգացման կարիքի հիման վրա իրականացվող վերապատրաստմանը:»:

3) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Յուրաքանչյուր ուսուցիչ, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները բավարարող յուրաքանչյուր անձ, կարող է դիմել և մասնակցել կամավոր ատեստավորման.»:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 9. Օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6-րդ կետում «և տնօրենի նշանակման կարգը» բառերը փոխարինել «,տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը» բառերով:

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 12.5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.5) հաստատում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կարգը և կամավոր ատեստավորման արդյունքով տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը.».

Հոդված 10. Օրենքի 30-րդ հոդվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետում «պետական ուսումնական հաստատություններ» բառերից առաջ լրացնել «մարզերի» բառը:

Հոդված 11. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «օգոստոսի 20-ը,» բառից և թվից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովում են ուսուցչին ներկայացվող պահանջները, կամ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և կառավարության սահմանած կարգով համարվել ատեստավորված: ***Կամավորը ատեստավորումը անցած և ատեստավորված անձը կարող է տվյալ կամ այլ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում իրականացնել (շարունակել) մանկավարժական աշխատողի գործունեությունը:*** ~~, որը հիմք է շարունակելու մասնագիտական գործունեությունը տվյալ կամ այլ ուսումնական հաստատությունում:~~ Կամավոր ատեստավորմանը հայտ ներկայացրած և անկախ պատճառներից՝ չմասնակցած ուսուցիչների մասնագիտական գործունեությունը դադարեցվում է ***համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած 2023 թվականի ժամանակացույցի՝*** ~~Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված 2023 թվականի ժամանակացույցով նախատեսված՝~~ տվյալ առարկայի կամավոր ատեստավորման օրվան հաջորդող օրվանից:» բառերը:

Հոդված 12. Սույն նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ուժի մեջ են մտնում հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ժամանակացույցի համաձայն:

Հոդված 13. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունման ժամկետը սահմանել սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 ամսվա ընթացքում:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԻ (Կ-620-20.06.2023-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	«Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետև՝ Նախագիծ) հոդված 2, կետ 1	«Ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարման» բառերը հանել :	Ընդունվել է	Ընդունվել է
2	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	**Նախագծի հոդված 7, կետ 1**	3-րդ կետում կատարվող փոփոխությունում՝ «ուսումնական հաստատության» բառերից հետո լրացնել «***առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող»***	Ընդունվել է	Ընդունվել է
3	ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան Կառավարություն	**Նախագծի հոդված 11**	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում	Ընդունվել է	Ընդունվել է

			«օգոստոսի 20-ը,» բառից և թվից հետո լրացնել «բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովում են ուսուցչին ներկայացվող պահանջները, կամ մասնակցել են կամավոր ատեստավորմանը և կառավարության սահմանած կարգով համարվել ատեստավորված: ***Կամավորը ատեստավորումը անցած և ատեստավորված անձը կարող է տվյալ կամ այլ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում իրականացնել (շարունակել) մանկավարժական աշխատողի գործունեությունը:*** Կամավոր ատեստավորմանը հայտ ներկայացրած և անկախ պատճառներից՝ չմասնակցած ուսուցիչների մասնագիտական գործունեությունը դադարեցվում է ***համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած 2023 թվականի ժամանակացույցի՝*** տվյալ առարկայի կամավոր ատեստավորման օրվան հաջորդող օրվանից:» բառերը:		